ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի (այսուհետ միասին՝ Նախագծեր) ընդունումը պայմանավորված է Վճռաբեկ դատարանի և Սահմանադրական դատարանի դատավորներին տրվող վարձատրության համակարգի վերանայման անհրաժեշտությամբ:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Սահմանադրության 164-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դատավորի համար սահմանվում է նրա բարձր կարգավիճակին և պատասխանատվությանը համապատասխանող վարձատրություն: Վճռաբեկ դատարանի և Սահմանադրական դատարանի դատավորների վարձատրության հետ կապված հարաբերությունները, այդ թվում՝ աշխատավարձի չափը, կարգավորվում են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք):

Օրենքով Վճռաբեկ դատարանի և Սահմանադրական դատարանի դատավորների համար սահմանված վարձատրության չափը, սակայն, չի համապատասխանում վերջիններիս կարգավիճակին և պատասխանատվությանը: Այս առումով պետք է նկատի ունենալ, որ օրինակ, «Պետական պաշտոններ և պետական ծառայության

պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-337-Ն օրենքով հակակոռուպցիոն դատարանի դատավորի համար, գործունեության ոլորտով պայմանավորված ռիսկայնությունից ելնելով, սահմանվեց հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 70 տոկոսի չափով: Նույն ձևով վերաքննիչ քրեական դատարանի կոռուպցիոն հանցագործությունների գործերը քննող առանձին դատավորների և վերաքննիչ քաղաքացիական դատարանի քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործեր քննող առանձին դատավորների համար, գործունեության ոլորտով պայմանավորված ռիսկայնությունից ելնելով, սահմանվեց հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 60 տոկոսի չափով: Որպես նշված փոփոխությունների տրամաբանական շարունակություն՝ անհրաժեշտություն է առաջացել վերանայել Վճռաբեկ դատարանի և Սահմանադրական դատարանի դատավորների վարձատրության չափը:

1. Վճռաբեկ դատարանի դեպքում նման անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես ներպետական համակարգում ամրագրված՝ Վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակով, գործունեության վերաբերյալ առկա կարգավորումներով, այնպես էլ միջազգային կառույցների կողմից դատական համակարգին տրվող երաշխիքների վերաբերյալ արտահայտած դիրքորոշումներով:

Այսպես, Սահմանադրության 171-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն դատական ատյանը, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, Վճռաբեկ դատարանն է: Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով՝

1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը.

2) վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է, որ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը Վճռաբեկ դատարանն ապահովում է, եթե առկա է իրավունքի զարգացման խնդիր, կամ տարբեր գործերով դատարանների կողմից նորմատիվ իրավական ակտը տարաբնույթ է կիրառվել կամ չի կիրառվել տարաբնույթ իրավաընկալման հետևանքով: Իսկ մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու նպատակով Վճռաբեկ դատարանը վերանայում է այն դատական ակտերը, որոնք խաթարում են արդարադատության բուն էությունը:

Ելնելով վերոնշվածից, կարող ենք նշել, որ իր սահմանադրաիրավական առաքելությունն իրականացնելիս Վճռաբեկ դատարանը նպաստում է իրավունքի զարգացմանը: Վճռաբեկ դատարանի որոշումներում առկա իրավական նորմերի մեկնաբանությունները գործուն դերակատարում ունեն ամբողջ դատական պրակտիկայի միասնականության ապահովման համար:

Ավելին, ինչպես արձանագրել է Սահմանադրական դատարանը Վճռաբեկ դատարանն իր սահմանադրական լիազորությունների իրականացման բերումով առերեսվում է դատավարական բողոքների մեծ քանակի և եռաստիճան դատական համակարգում իր քննությանը ներկայացված իրավունքի և փաստի ամենաբարդ հարցերի քննությանը[1]:

Այս համատեքստում Վճռաբեկ դատարանի գործառույթների հնարավորինս արդյունավետ իրականացումը ունի մեծ հանրային-իրավական նշանակություն այն իմաստով, որ թե՛ պետությունը և թե՛ հասարակությունը շահագրգռված են օրենքների և նորմատիվ իրավական այլ ակտերի ճիշտ ու միատեսակ կիրառման, դատական պրակտիկայի հետևողականության և կանխատեսելիության ապահովման հարցում:

---

[1] Սահմանադրական դատարանի 2022 թվականի փետրվարի 1-ի ՍԴՈ-1628 որոշումը:

Վերոնշված հիմնավորումները ոչ միայն ընդգծում են Վճռաբեկ դատարանի դատավորների վրա դրված առաջադրանքների առանձնակի կարևորությունը, այլ նաև պահանջում են սոցիալական և նյութական անկախության լրացուցիչ երաշխիքներ նախատեսել Վճռաբեկ դատարանների դատավորների համար:

2. Ինչ վերաբերում է Սահմանադրական դատարանին, ապա այն սահմանադրական արդարադատության ոլորտում հանդիսանում է բարձրագույն դատական ատյան: Սահմանադրության 167-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը՝ ապահովելով Սահմանադրության գերակայությունը, որի շրջանակներում Սահմանադրական դատարանն անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը:

Միաժամանակ, Սահմանադրության 7-րդ գլխի կարգավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Սահմանադրական դատարանի լիազորությունների շրջանակը էականորեն տարբերվում է Սահմանադրության 163-րդ հոդվածով ամրագրված մյուս դատարանների լիազորությունների շրջանակից: Նշվածը բխում է Սահմանադրության 168-րդ հոդվածով ամրագրված՝ Սահմանադրական դատարանի լիազորությունների բնույթից:

Որպես սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմին՝ Սահմանադրական դատարանի լիազորություններն առնչվում են տարաբնույթ և ժողովրդավարական ու իրավական պետության համար կարևորագույն նշանակություն ունեցող ոլորտների հետ (նորմատիվ իրավական ակտերի սահամանադրականության ստուգում, սահմանադրական մարմինների միջև վեճերի լուծում, կուսակցությունների գործունեության կասեցում, արգելում, հանրաքվեի, ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճեր և այլն):

Անդրադառնալով Սահմանադրական դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակին՝ ՍԴՈ-943 որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները «...կոչված են իրավակիրառական պրակտիկայում ապահովելու ՀՀ

Սահմանադրության առավել ամբողջական և միակերպ ընկալումն ու սահմանադրական օրինականությունը, իրավակիրառական պրակտիկան նպատակամղելու նորմատիվ ակտերն իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան ընկալելու և կիրառելու ուղղությամբ: Որպես սահմանադրական իրավունքի կարևոր աղբյուր՝ դրանք սկզբունքային նշանակություն ունեն սահմանադրական դատարանի որոշումներից բխող օրինաստեղծ (նորմաստեղծ) գործունեության համար:»:

Սահմանադրական դատարանի սահմանադրական առաքելությունը և պարտականությունն է ապահովել սահմանադրական ժողովրդավարության գոյության և կենսագործման ամենաառանցքային պայմանը՝ Սահմանադրության գերակայությունը, որն էլ Սահմանադրական դատարանը պարտավոր է ապահովել ժողովրդավարության և մարդու իրավունքների և ազատությունների սահմանների պաշտպանությամբ: Սահմանադրակական դատարանի կարգավիճակի առանձնահատկությունը ամփոփված է սահմանադրական վերահսկողության գաղափարում, համաձայն որի, ի տարբերություն Հայաստանի Հանրապետությունում բոլոր այլ դատական ատյանների, որոնք արդարադատության իրականացման ընթացքում չեն կարող դուրս գալ օրենսդրի կամքի շրջանակից, Սահմանադրական դատարանն իր գործունեությամբ ենթարկվում է միայն Սահմանադրությանը և միակ իրավասու ատյանն է, որն ի զորու է անվավեր ճանաչել օրենսդրի ընդունած իրավական ակտը:

Ամփոփելով Սահմանադրական դատարանի բարձր կարգավիճակի և պատասխանատվության առանձնահատկությունները՝ հարկ է նշել, որ.

- Սահմանադրական դատարանը հանդիսանում է սահմանադրական արդարադատություն իրականացնող բարձրագույն դատական ատյանը,
- Սահմանադրական դատարանի լիազորությունների շրջանակը սահմանվում է միայն Սահմանադրությամբ,
- Սահմանադրական դատարանի լիազորությունների շրջանակը ի թիվս այլնի ներառում է՝ օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության

նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը որոշելը, մինչև Սահմանադրության փոփոխությունների նախագծի, ինչպես նաև հանրաքվեի դրվող իրավական ակտերի նախագծերի ընդունումը դրանց համապատասխանությունը Սահմանադրությանը որոշելը և այլն,

- Սահմանադրական դատարանի դատավորի անկախությունը անհրաժեշտ է ապահովել նրա բարեկեցության երաշխիքների ընդլայնմամբ, այդ թվում՝ նյութական,
- Սահմանադրական դատարանի լիազորությունների շրջանակով պայմանավորված՝ Սահմանադրական դատարանի դատավորներին ներկայացվող պահանջները, նրանց նշանակման կարգը ևս տարբերակված են: Վերջիններիս ներկայացվում են առավել բարձր չափանիշներ (հոդված 165):

Այսպիսով, Սահմանադրական դատարանի լիազորությունների առանձնահատուկ շրջանակով պայմանավորված, առկա է Սահմանադրական դատարանի դատավորի կարգավիճակի և պատասխանատվությանը համահունչ լրացուցիչ աշխատավարձի տարբերակված համակարգի ներդնման անհրաժեշտությունը, քանի որ Սահմանադրական դատարանի դատավորի վերը նշված ընդհանուր բնույթի առանձնահատկություններից բացի, այս պահին Հայաստանի Հանրապետությունում գործող Օրենքով նախատեսված վարձատրության կարգը չի համապատասխանեցվել Սահմանադրության 2020 թվականի հունիսի 22-ի փոփոխություններով նախատեսված Սահմանադրական դատարանի մոդելին: Մասնավորապես, Սահմանադրության 2020 թվականի հունիսի 22-ի փոփոխությամբ Սահմանադրական դատարանի բոլոր անդամները և դատավորները պաշտոնավարելու են որպես Սահմանադրական դատարանի դատավոր՝ առավելագույնը 12 տարի պաշտոնավարման ժամկետով: Այսինքն, եթե նախկինում Սահմանադրական դատարանի անդամները կամ ներկայումս դատական համակարգի այլ ատյաններում աշխատող դատավորները կարող են պաշտոնավարել մինչև 65 տարեկանը լրանալը, ապա նշված փոփոխությունների արդյունքում Սահմանադրական դատարանի դատավորների պաշտոնավարման

առավելագույն ժամկետը, անկախ նրանց տարիքից, 12 տարի է, ինչը ազդում է նաև նրանց՝ լրացուցիչ աշխատավարձիտեսքով վարձատրության չափի վրա հետևյալ կերպ. անձը, Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնում ընտրվելուց հետո ստանում է տարեկան 2 տոկոս պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հաշվարկվող տոկոսային ավելացմամբ հավելավճար, ինչը 12 տարվա ընթացքում (այսինքն՝ Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնավարման մեկ ժամկետի ընթացքում) հավասարվում է առավելագույնը 22%-ի:

Վերոնշվածը առաջին հերթին պայմանավորում է Սահմանադրական դատարանի դատավորների համար լրացուցիչ նյութական և սոցիալական երաշխիքներ նախատեսելու անհրաժեշտությունը: Մյուս կողմից, Սահմանադրական դատարանը 2006 թվականի սեպտեմբերի 20-ի ՍԴՈ-647 որոշմամբ ուղղակիորեն կարևորել է այն հանգամանքը, որ դատավորի սոցիալական ապահովության իրավունքի իրացման հետ կապված հարաբերությունները կարգավորելիս չի կարող խախտվել դատավորի՝ իր զբաղեցրած վերջին պաշտոնում ստացած աշխատավարձին՝ կենսաթոշակի չափը հնարավորինս մոտ սահմանելու միջազգայնորեն ընդունված սկզբունքը: Սահմանադրական դատարանը 2019 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ- 1463 որոշմամբ, ի թիվս այլնի, նաև փաստել է, որ կախված դատավորի վարձատրության չափից՝ կենսաթոշակի չափի որոշման անհրաժեշտությունը դատավորների անկախության սոցիալական երաշխիքների կարևոր բաղադրատարր է, և դատավորները պետք է ապահովված լինեն օրենքով սահմանված համարժեք այնպիսի կենսաթոշակով, որը պաշտոնավարման ամբողջ ընթացքում զերծ կպահի նրանց կողմնակի ազդեցությունից:

Այս առումով պետք է նկատի ունենալ այն, որ Օրենքով նախատեսված լրացուցիչ աշխատավարձի տեսակներից հենց հավելավճարի գումարն է մասնակցում «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքով նախատեսված կենսաթոշակի գումարի հաշվարկին: Ուստի Օրենքում Սահմանադրական դատարանի դատավորի համար նախատեսված հավելավճարի չափը բարձրացնելու դեպքում Սահմանադրական դատարանի

պաշտոնաթող դատավորի կենսաթոշակը կմոտենա կենսաթոշակավորված դատավորների թոշակին, ինչով կապահովվի Սահմանադրական դատարանի դատավորների նկատմամբ (անկախ կենսաթոշակի անցնելու պահից) հավասար վերաբերմունքը: Բացի այդ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սահմանադրության 2020 թվականի փոփոխությամբ Սահմանադրական դատարանում ամբողջությամբ հավասարեցվել են դատավորների կարգավիճակները, որի հետևանքով կրճատվել են նաև 4 դատավորի պաշտոնավարման ժամկետ, հավելավճարի չափի ավելացմամբ փոխհատուցվելու է կենսաթոշակային գումարի այն տարբերությունը, որը կարող էր առաջանալ կրճատված պաշտոնավարման ժամկետի և մինչև 65 տարեկանը պաշտոնավարելու դեպքում աշխատավարձների տարբերությամբ պայմանավորված:

Մյուս կողմից, Սահմանադրական դատարանի ներսում անհրաժեշտ է ապահովել դատավորների միջև հավասար վարձատրությունը: Խնդիրը կայանում է նրանում, որ Սահմանադրական դատարանի բոլոր դատավորներն ունեն **նույն** կարգավիճակը, լիազորությունների նույն բնույթն ու ծավալը և կատարում են նույն պարտականությունները, հավասարապես պատասխանատվություն են կրում իրենց պաշտոնից բխող նպատակների և խնդիրների իրականացման համար, ունեն **հավասար** ձայնի իրավունք, աշխատում են **նույնչափ** ծանրաբեռնվածությամբ և ըստ այդմ, պետք է նրանց համար նախատեսված նյութական և սոցիալական երաշխիքները պետք է լինեն հավասար:

Միևնույն ժամանակ, ինչպես արդեն նշվեց «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի նախագահի, փոխնախագահի և դատավորի կենսաթոշակը հաշվարկվում է զբաղեցրած վերջին պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ այդ պաշտոնի համար սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձից (պաշտոնային դրույքաչափի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարի հանրագումարից): Նման պայմաններում, որպեսզի նախագծի ընդունման դեպքում նշված պաշտոնատար անձանց կեսաթոշակի չափն էլ իր հերթին

զգալիորեն չտարբերվի մյուս ատյանների դատավորների կենսաթոշակի չափից, որը կարող է որակվել որպես արտոնության կամ առավելության տրամադրման առումով տարբերակված մոտեցում՝ խտրականություն, անհրաժեշտություն է առաջանում «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքում նախատեսել կարգավորում, որը կապահովի նշված պաշտոնատար անձանց կենսաթոշակների չափի համաչափ տարբերությունը:

Հարկ է նշել, որ դատական իշխանության մարմիններին տրվող սոցիալական երաշխիքներին և վարձատրությանը, ինչպես նաև դրանց տարբերակվածությանը անդրադարձ են կատարել նաև միջազգային կառույցները: Մասնավորապես, «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) բազմիցս դիրքորոշում է հայտնել դատավորների նյութական երաշխիքների ապահովման անհրաժեշտության վերաբերյալ: Վենետիկի հանձնաժողովը 2009 թվականի հունիսի 4-ի «Դատական համակարգի անկախությունը. Մաս 1. Դատավորների անկախությունը» զեկույցի շրջանակներում նշել է, որ. «Դատավորների վարձատրությունը պետք է համապատասխանի նրանց մասնագիտական արժանապատվությանը և այդ համարժեք վարձատրությունը անփոխարինելի է դատավորներին արտաքին անհարկի միջամտությունից պաշտպանելու համար: (...) Վարձատրությունը պետք է հիմնված լինի ընդհանուր ստանդարտների վրա և համապատասխանի օբյեկտիվության, թափանցիկության չափանիշներին և չհիմնվի դատավորի անհատական գործունեության գնահատման վրա:»[2]:

Վենետիկի հանձնաժողովը 2019 թվականի դեկտեմբերի 11-ին «Դատարանների և դատավորների մասին Վենետիկի հանձնաժողովի կարծիքներ և զեկույցներ»

[2] Տե՛ս "Report on the independence of the judicial system: part I: The independence of judges" Strasbourg, 16 March 2010, CDL-AD(2010)004, p. 10. https://rm.coe.int/1680700a63

ժողովածուի[3] շրջանակներում ամփոփելով դատական համակարգի, այդ թվում՝ դատավորների վարձատրության վերաբերյալ արտահայտած դիրքորոշումները, նշել է. «Դատավորի վարձատրությունը պետք է սահմանվի օրենքով և պետք է հավասար լինի նույն պարտականությունները կատարող դատավորների համար: Տարբերություններ կարող են լինել *ավագության, դատարանի աստիճանի կամ օրենքով հստակորեն սահմանված այլ չափանիշների* հիման վրա (...)»:

Դատավորների վարձատրությանը անդրադարձ է կատարվել նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի CM/Rec(2010)12 «Դատավորներ. անկախություն, արդյունավետություն և պատասխանատվություն» հանձնարարականի շրջանակներում: Մասնավորապես նշվել է, որ «Դատավորների վարձատրությունը պետք է համաչափ լինի իրենց մասնագիտությանն ու պարտականություններին, և **պետք է հանդիսանա նրանց որոշումների կայացման վրա ազդեցություն գործելու նպատակ հետապնդող ազդակներից պաշտպանության արդյունավետ միջոց**:»:

Եվրոպայի խորհրդի շրջանակներում 1998 թվականին ընդունված «Դատավորների կարգավիճակի մասին» եվրոպական խարտիայի 6.2-րդ կետի համաձայն՝ դատավորի վարձատրության չափը մյուս դատավորի վարձատրության համեմատությամբ կարող է փոփոխվել կախված ծառայության տևողությունից, ***իրենց կողմից կատարվող պարտականությունների բնույթից և իրենց վրա դրված առաջադրանքների կարևորությունից***: Այնուհետև կարևորվում է նման առաջադրանքների գնահատման չափորոշիչների թափանցիկությունը՝ խուսափելու այնպիսի տարբերակումներից, որոնք կապված չեն կատարված աշխատանքի կամ դրա պիտանիության հետ:

Միջազգային կառույցների նշված դիրքորոշումների համադրությունից կարելի է առանձնացնել դատավորների վարձատրության համակարգի մի քանի կարևոր չափանիշներ, այն է.

---

[3] Տե՛ս "Compilation of venice commission opinions and reports concerning courts and judges" Strasbourg, 11 December 2019, CDL-PI(2019)008, p. 66. https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-PI(2019)008-e

- դատավորների վարձատրության համակարգը պետք է ամրագրվի օրենքով՝ բացառելու համար հնարավոր հայեցողության դրսևորումը,
- դատավորների վարձատրությունը պետք է համապատասխանի նրանց մասնագիտությանը, մասնագիտությունից բխող պարտականություններին և պետք է չեզոքացնի մասնագիտական պարտականություններին խոչընդոտ հանդիսացող հնարավոր ազդեցությունները,
- դատավորների վարձատրությունը կարող է տարբերակվել դատավորների ավագությամբ, դատարանի աստիճանով, դատավորների վրա դրված առաջադրանքների կարևորությամբ, դատավորի կողմից կատարվող պարտականությունների բնույթով և օրենքով հստակ սահմանված այլ չափանիշներով:

Ներպետական մակարդակում ևս արդարադատություն իրականացնող մարմինները անդրադարձ են կատարել վարձատրության առկա խնդիրներին: Սահմանադրական դատարանը 2019 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1463, 2019 թվականի փետրվարի 12-ի ՍԴՈ-1443, 2010 թվականի մայիսի 10-ի ՍԴՈ-881 և այլ որոշումներով անդրադարձ է կատարել տարբերակված վարձատրության հիմնահարցին: Ամբողջացնելով Սահմանադրական դատարանի սույն որոշումներում արտահայտված դիրքորոշումները՝ կարելի է ասել, որ Սահմանադրական դատարանը նույնիսկ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում թույլատրելի է համարում տարբերակված մոտեցումը, եթե այն համապատասխանում է հետևյալ երկու չափանիշներին, այն է՝

ա) ունի օբյեկտիվ հիմք,

բ) հետապնդում է իրավաչափ նպատակ:

Առաջարկվող կարգավորման բնույթը

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանդրական օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորի վարձատրության, այդ թվում՝ հիմնական և լրացուցիչ

աշխատավարձերի հաշվարկների և չափերի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Օրենքով, իսկ կենսաթոշակի հետ կապված հարաբերությունները՝ «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքով՝ Նախսագծերով առաջարկվում է՝

1. Սահմանադրական դատարանի նախագահի, փոխնախագահի և դատավորի պաշտոն զբաղեցնելու պայմանը ներառել հավելում վճարելու պայմանների ցանկում, և Սահմանադրական դատարանի բոլոր դատավորների համար հավելավճարի չափը սահմանել ֆիքսված՝ պաշտոնային դրույքաչափի 80 տոկոսի չափով.

2. Վճռաբեկ դատարանում դատավորի (այդ թվում՝ նախագահի և պալատի նախագահի) պաշտոն զբաղեցնելու պայմանը ներառել հավելում վճարելու պայմանների ցանկում, և Վճռաբեկ դատարանի դատավորների (այդ թվում՝ նախագահի և պալատի նախագահի) համար սահմանել պաշտոնային դրույքաչափի 50 տոկոսի չափով հավելում.

3. եթե դատավորի համար Օրենքով սահմանված հավելավճարի չափը գերազանցում է պաշտոնային դրույքաչափի 30 տոկոսը, ապա նրա կենսաթոշակի հաշվարկի մեջ ընդգրկվում է հավելավճարի գումարի 30 տոկոսը:

Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագծերը մշակվել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից:

Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարություն և դրանից բխող գործողությունների ծրագիր

Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» N 1441-Ն որոշման Հավելված 1-ով սահմանվել է

միջոցառում՝ ուղղված դատավորի աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարների բարձրացման օրենսդրական փոփոխություններ իրականացնելուն:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշման միջոցառումների ծրագրի 12-րդ կետով նախատեսվում է պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության համակարգի բարեփոխմանն ուղղված միջոցառում:

Ակնկալվող արդյունքը

Նախագծերի ընդունմամբ ակնկալվում է Սահմանադրական դատարանի դատավորի, փոխնախագահի և նախագահի հավելավճարը սահմանել 80 տոկոսի չափով, իսկ Վճռաբեկ դատարանի դատավորների (այդ թվում՝ նախագահի և պալատի նախագահի) համար սահմանել պաշտոնային դրույքաչափի 50 տոկոսի չափով հավելում որպես Սահմանադրության 164 հոդվածի 10-րդ մասով նախատեսված նրանց բարձր կարգավիճակին և պատասխանատվությանը համապատասխան վարձատրություն: